Ք. Ս. ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ. XI—XV դարերի հայ վարքագրությունը, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1980, 205 էջ:

Հայ միջնադարյան գեղարվեստական արձակի զարգացման պատմության մեջ որոշակի տեղ են գրավում վարքերն ու վկայաբանությունները, որոնց ուսումնասիրությունը հայ բանասիրության համար խիստ շահեկան է թե աղբյուրագիտական, և թե բանասիրական ու գրականագիտական նկատառումներով։

Հայ վարքագրական հարուստ ժառանգությունը ներկայացնող կարևոր գործի ժամանակակից նախաձեռնողը Ք. Տեր-Դավթյանն է, որը դեռևս 1973 թ. հրատարակեց «Памятники армянской этнографии» ուշագրավ աշխատությունը։ Այնուհետև բանասերը կատարեց իր ուսումնասիրության հաջորդ քայլը՝ հրապարակ հանելով XI—XV դդ. հայ վարքագրությունը նվիրված գիրքը։ Սա արդեն հայ վարքագրության տեսությունն է։ Թեպետ այն դրված է «XI—XV դարերի հայ վարքագրությունը» վերնագրի տակ, սակայն, իրականում մ. ավելի տարողունակ է, որովհետև հեղինակը վարքի և վարքագրության պատմությունը սկսում է ժանրի լինելիության ձևավորման պրոցեսներից և հասցնում մինչև նրա հասունացման դասական շրջանը՝ XV դարը։

Հայտնի է, որ վարքերն ու վկայաբանությունները հայ միջնադարյան գրականության կենսունակ ժանրերից են և հարատևել են մինչև XVIII դարը։ Իրավացի է հետազոտողը, երբ XVI—XVIII դդ. չի տեսնում ժանրի նոր փայլատակումներ (գեղարվեստական վերընթաց զարգացման առումով) և այդ հատվածը համարում է նախորդի ավանդական շարունակությունը միայն։

Ուսումնասիրության մեջ որոշակիորեն տեսանելի է այն ճանապարհը, որով անցել է հայ սրբախոսական գրականությունը, սկսած օտար ու թարգմանական երկերի՝ Հայաստան ներթափանցելու վաղ ժամանակներից։ Բնականաբար, ժանրի սահմանումը տրվում է միջազգային բանասիրության (հատկապես հունական, լատինական, բյուզանդական, ռուսական) համապատասխան քննություններին համադրմամբ։ Ըստ որում, հանգամանորեն ներկայացվում են սրբախոսական գրականության լայն սահմանները, ներառյալ նաև ներբողյանները։ Այստեղ կարևոր քննության առարկա է «Պիտույից գիրքը», որը պարունակում է ներբողների, ճառերի, վարքերի և գրական այլ սեռերի ու ժանրերի գրականագիտական հնագույն սահմանումները։ Պետք է նկատել, որ այն մինչև օրս արժանացել է լոկ մասնակի ուսումնասիրությունների, մինչդեռ հայ գրականագիտության համար ունի ելակետային արժեք։ Այս առումով ևս Ք. Տեր-Դավթյանի ուսումնասիրությունն արժանի է հատուկ ուշադրության, որովհետև վարքագրության ժանրային հարցերը քննելիս, նա անդրադառնում է «Պիտույից գրքի» քննադրող կարևոր և բարդ սահմանումներին՝ իր հետազոտությանը տալով անհամեմատ լիարժեք բնույթ։

Ք. Տեր-Դավթյանի գրքի կարևոր նորությունների մեկն էլ այն է, որ հեղինակը կանգ է առնում հայ միջնադարի քիչ ուսումնասիրված, բայց լայն տարածում գտած ժողովածուների՝ Հայսմավուրքների վրա, հաղորդում է ժամանակագրական տեղեկություններ այդ ժողովածուների կազմվելու մասին և նշում դրանց կատարած դերը սրբախոսական գրականության պահպանման հարցում։

Ընդհանրապես ուսումնասիրությունը շահում է նրանով, որ սրբախոսական գրականության զարգացումը ներկայացվում է հայ միջնադարյան գրականության ընդհանուր զարգացման տեսադաշտում։ Այսպես, օրինակ, ճշտորեն է ներկայացվում, որ XI—XV դդ. վարքագրության մեջ, ինչպես գրական ուրիշ ժանրերում, արտացոլվում են միջնադարի մարդու աշխարհայացքային փոփոխությունները, այն է՝ անհատի մեղավորության կողքին հանդես է բերվում նաև ողջ հասարակության մեղավորության գաղափարը։ Դա միջնադարի գրականության մեջ հանդես է գալիս իբրև բոլորովին նոր որակ։

Հետազոտողը V դ. սրբախոսական հուշարձանները, ելնելով դրանց բովանդակությունից, բաժանում է երեք խմբի։ Առաջին խմբի մեջ մտնում են այն հուշարձանները, որոնք կապվում են հայերի քրիստոնեություն ընդունելու հետ, ինչպիսիք են, օրինակ, Գրիգոր Լուսավորչի, Հռիփսիմյան կուսների, Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների վկայաբանությունները։ Երկրորդ խմբում նա զետեղում է հայ գրերի ստեղծման գործի հեղինակներին՝ Մեսրոպ Մաշտոցին և Ռահակ Պարթևին նվիրված վարքագրական երկերը։ Երրորդ խմբի մեջ են այն վկայաբանությունները, որոնք պարզում են հայ ժողովրդի հերոսական պայքարը պարսկական նվաճողական քաղաքականության դեմ. այդպիսիք են Ղազարի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազ-

մին» երկի համապատասխան հատվածները, Նուշանիկի և Ատոմյանց վկայաբանությունները։ Խոսելով այդ շրջանի սրբախոսական երկերի գեղարվեստական բարձր մակարդակի մասին, հեղինակն իրավացիորեն նկատում է, որ «այդ շրջանում որպես սրբախոսներ էին հանդես գալիս հայ ականավոր մշակութային գործիչները» (էջ 31)։

Գրքի այս հատվածում հետազոտողը հիմնավոր և հետաքրքիր կարծիքներ է հայտնում Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատության վերաբերյալ, նրա բովանդակության մեջ դիտել տալով վարքագրության թելադրած անհրաժեշտ կաղապարը։ Այստեղ բանասերը փաստորեն ամրապնդում է այն միտքը, որ վարքագրությունը որպես գրական ժանր, իրոք, ունի պատմական և ճանաչողական ցայտուն արժանիքներ։

Ուսումնասիրության մեջ մանրամասն քննվում են հայ գրականության և մշակույթի նշանավոր ներկայացուցիչներ Գրիգոր Նարեկացուն, Հովհաննես Իմաստասերին, Ներսես Շնորհալուն, Ներսես Լամբրոնացուն, Գևորգ Սկևռացուն, Ստեփանոս Սյունեցուն, Գրիգոր Տաթևացուն, Մկրտիչ Նաղաշին և ուրիշների նվիրված վարքերը։ Դրանց քննությունն աչքի է ընկնում բանասիրական և կենսագրական փաստերի ուշագրավ ճշգրտումներով, պատմական դեպքերի կոնկրետացմամբ, ժամանակագրական վավերականացմամբ։ Շատ կարևոր ճշգրտումներ են կատարվում, օրինակ, Գրիգոր Տաթևացու կենսագրական փաստերը պարունակող հայսմավուրքային վարքը ներկայացնելիս։

Գրախոսվող աշխատության մեջ պատշաճ տեղ է տրված միջնադարի հայ գրականության կարևորագույն հարցերից մեկին՝ XI—XV դդ. հայկական վարքերի գեղարվեստական առանձնահատկություններին։ Այստեղ բնորոշվում են ժանրի զարգացման հիմնական երկու ուղղությունները՝ ժողովրդական և ներբողական-հռետորական։

Ներբողական վարքերի առիթով տրվում է գրանցում եղած խորհրդանիշների բացատրությունը, առանց որի անհնար է հասկանալ միջնադարյան գրականության մեջ այնքան տարածված այլաբանական երևույթները։ Սա նույնպես գրքի բերած կարևորագույն ներդրումներից է։

Ժողովրդական ուղղություն ունեցող վարքերը հեղինակը դիտում է որպես նոր որակ, որոնցում առավել ցայտուն ձևով է դրսևորված ժողովրդական բանահյուսության և գրականության փոխներթափանցումը։ Այս երևույթը նույնքան ճշտորեն նկատվում է ուսումնասիրության ուրիշ մասերում ևս։ Այստեղ մատնացույց են արված այն հանգույցները, որոնք հայ վարքագրությունը կապում են ժողովրդական բանահյուսության, մասնավորապես հեքիաթների ժանրի հետ։ Բացի այդ, նկատվում է, որ այս ներթափանցման ուժեղացումը վարքագրությանը բերում է որակական արմատական փոփոխություններ. թարմանում են ոճը, կերպարները բնութագրելու եղանակը, առավել լայն չափերով են երևում իրական կյանքը, կենցաղը, ժողովրդի սովորությունները, ապրումներն ու ձգտումները։ Վարքերի այսօրինակ զարգացումը դրանց դարձնում է իրական կյանքի ճշմարիտ արձագանքներ և շեշտում միջնադարյան հայ գրականության աշխարհիկացման միտումը։

Գրքում շատ հետաքրքիր ձևով է դիտված վարքերի գեղարվեստականության մի կարևոր արժանիքը ևս՝ կերպարների կերտումը։ Նրանք սկզբնական միագիծ բնութագրումից ժամանակի ընթացքում վերաճում են և հարստանում կենսական ու կենդանի գծերով, դառնում իսկական գրական կերպարներ։ Այս առումով հիշատակության արժանի է հատկապես Մկրտիչ Նաղաշի վարքագրական կերպարի չմոռացվող անհատականացումը։ Մկրտիչ Նաղաշն ապրել ու գործել է դժվարին պատմական իրադրություններում և հայ ժողովրդի ազգային շահերից ելնելով երբեմն դիմել է անհրաժեշտ դիվանագիտության։ Արժանահիշատակ է այդ կերպարի գիտական մեկնաբանման միտումը։ «Սակայն էականն այստեղ այն է,— գրում է Ք. Տեր-Դավթյանը,— որ վարքագրական հերոսի՝ ժամանակի մշակութային-քաղաքական նշանավոր գործչի Մկրտիչ Նաղաշի, դիմագիծն ամբողջանում է ոչ թե սոսկ վարքագրության կարծրացած կաղապարի, այլ պատմական հանգամանքների, հոգեբանական ճշմարիտ իրավիճակների նկարագրության միջոցով։ Նաղաշի վարքագիծը փաստորեն դառնում է պատմական եղելությունների յուրատեսակ արտացոլումը» (էջ 147)։

Ուսումնասիրության միջոցով ստեղծվում է նաև ամբողջական պատկեր՝ միջնադարյան հայ մարդու գեղագիտական ընկալումների վերաբերյալ։

Այսպիսով, Ք. Տեր-Դավթյանի «XI—XV դարերի հայ վարքագրությունը» աշխատությունը հստակ պատկերացում է տալիս հայ վարքագրության մասին, ուրվագծվում են վարքագրական հերոսները՝ իրենց մարդկային, գիտական, լուսավորչական գաղափարներով, կյանքի պատմա-

թյամբ, հայրենասիրական նկարագրով, ստեղծագործական անսպառ եռանդով, մարդկային առաքինություններով։ Այդ կերպարներն օգտագործվել են հետագա շրջանի գրողների կողմից։

Մեր կարծիքով մի փոքր անհամապատասխանություն կա ուսումնասիրության վերնագրի և բովանդակության միջև։ Չնայած գիրքը խորագրված է «XI—XV դարերի հայ վարքագրություններ», բայց բովանդակության մեջ, ինչպես նշվեց, պատշաճ տեղ է տրված V—X դդ. հայ սրբախոսությանը, որը և առաջացնում է որոշ հակասություն՝ վերնագրի և բովանդակության միջև։ Սակայն կարևորը բովանդակությունն է, որը տվյալ վիճակում ավելի ամբողջական է։

Ուսումնասիրությունը գիտական քարմ ու սպառիչ խոսք է, և որպես երեույթ շեշտում է այն անհրաժեշտությունը, թե պետք է նմանօրինակ ուսումնասիրության ենթարկվեն նաև միջնադարի հայ գրականության ուրիշ, քիչ ուսումնասիրված ժանրերն ու հուշարձանները։

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու